ՈՒՀՁ դասապլան

ՊՈԱԿ դպրոց	Ամսաթիվ	Առարկա
Արամուսի Վլ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց	**06.11.2025թ.**	**Հասարակագիտություն**
Ուսուցիչ	**Դասարան (աշակերտներ)**	**Թեմա (էջ)** **57-61**
Անուշ Թադևոսյան	**11բ**	**Զբաղվածություն և գործազրկությունաստիճանակարգից**
Կարևոր հղումներ և կիսամյակային արդյունքներ *(Տեղադրել հղումները)*	• *Դասացուցակ* • *Դասագիրք* • *Թեմատիկ պլան*	• *Ակադեմիական հայտորոշիչ թեստի վերլուծություն* • *Առաջնորդական կարողունակությունների վերլուծություն*

Դասի վերջնարդյունքներ

Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին: Օգտվել Բլում-Անդերսոնի ՍՄԱՐԹ վերջնարդյունքներ սահմանելու համար:

- Ներկայացնել գործազրկություն հասկացությունը
- Տարանջատել գործազրկության տեսակները
- Արժևորել զբաղվածության նշանակությունը Արամուս համայնքում

Առաջնորդական կարողունակություններ

Հիմնվելով առաջնորդության հայեցակարգի վրա՝ ո՞ր կարողունակություններն եք ուզում զարգացնել ձեր և ձեր աշակերտների համար: Մեկ դասի շրջանակներում ցանկալի է սահմանել 1-2 կարողունակություն՝ իրատեսականությունը պահպանելու նպատակով:

Ուսուցչի կարողունակություններ	**Աշակերտի կարողունակություններ**
Նշեք թե ինչ քայլերով եք զարգացնելու նշված կարողունակությունը դասի ընթացքում:	*Նշեք թե ինչ քայլերով եք զարգացնելու նշված կարողունակությունը դասի ընթացքում:*

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ • Ուսուցիչը բացահայտում է աշակերտների ուժեղ կողմերը՝ խթանելով համագործակցություն գործնական և թիմային աշխատանք կատարելու ընթացքում:	**ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԵԼ** • Աշակերտները դասի գործնական աշխատանքի փուլում դրսևորում են փոխադարձ հարգանք և լսելու կարողունակություն, զարգացնում են իրենց ինքնակառավարումը և բարելավում թիմային աշխատանքի հմտությունները: **ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ.** • Ինքնուրույն աշխատանքի ժամանակ ուսուցիչը բացահայտում է աշակերտների ստեղծագործական հմտությունները և երևակայությունը:

Անհրաժեշտ պարագաներ *Ի՞նչ դիդակտիկ պարագաներ և նյութեր են անհրաժեշտ դասի ամեն փուլի համար:*	**Բանալի հասկացությունները** Ի՞նչ կարևոր հասկացություններ, անվանումներ և սահմանումներ են սովորելու աշակերտները:	**Գնահատում** Ինչպե՞ս եք չափելու աշակերտների առաջընթացն ու դասի վերջնարդյունքները:
• թուղթ • մատիտներ • կպչուն թղթիկներ • Սոսինձ • Մկրատ	• Թերզբաղված • Գերպարտք • Բիզնես ցիկլ • Ֆրիկցիոն գործազրկություն	• Գործնական աշխատանք • Ինքնուրույն աշխատանք • Հարցադրումներ

Դասի սկիզբ (5 րոպե)

Այս հատվածում պետք է բացատրել «ինչո՞ւ» կարևոր դրույթը և կապել այն մեծ նպատակի հետ: Գրել ինչպես, ինչ մեթոդով, եղանակով է իրականացվելու դասի սկիզբը, ինչ հրահանգներ և հարցեր են տրվելու: Նշել ուսուցչի և աշակերտների գործողությունները:

Պլանավորման ուղղորդումներ ❖ **Անհրաժեշտ է ներկայացնել** • *վարքային և այլ սպասելիքները* • *դասի թեման և վերջնարդյունքները* • *դասի կարևոր դրույթներն ու բառապաշարը* • *կապը նախորդ գիտելիքի հետ* • *խթանիչ վարժություն (եթե կա)*	Ուսուցիչը ողջունում է աշակերտներին: Ներկայացնում դասի համար սահմանված կանոնները: **Մեթոդը " Բլից հարցեր»)** Ուսուցիչը ներկայացնում է հետևյալ հարցերը՝ • **Ձեզ համար ի՞նչն է ավելի կարևոր աշխատանքի մեջ բարձր աշխատավարձը, թե հաճելի միջավայրը:** • **Եթե աշխատավարձը լիներ ըստ տրամադրության՝ ո՞ր օրերը կաշխատեիք ավելի շատ:** • **Ձեր կարծիքով, գյուղում գործազրկություն կա՞:** • **Թվարկեք 3 աշխատանք, որ «ոչ պաշտոնական» են, բայց մարդիկ իրականում զբաղված են:** • **Ընտրեք մեկ տարբերակ. մարդու համար ավելի սթրեսային է.** • ա) Գործազրկություն բ) Առավոտյան երկուշաբթի աշխատանքի գնալը • **Կարո՞ղ է մարդը պաշտոնապես «գործազուրկ» լինել, բայց իրականում շատ զբաղված: Օրինակ բերեք:** • **Ի՞նչն է ավելի դժվար աշխատանք գտնելը, թե աշխատանք պահելը:** Պատասանները քննարկելուց հետո բանավոր ներկայացնում է դասի վերջնարդյունքները: Աշակերտները նախապես գրատախտակին փակցված վերջնարդյունքները ընթերցում են:

Նոր նյութի ներկայացում (10 րոպե)

Անհրաժեշտ է ներկայացնել դասի «ինչ»-ն ու «ինչպես»-ը: Բացատրել նոր նյութը, տրամադրել հրահանգներ, բերել օրինակներ և կատարել ընկալման ստուգում:

❖ **Պլանավորման ուղղորդումներ**	Ուսուցիչը ներկայացնում է նոր նյութը՝ «**Զբաղվածություն և գործազրկություն**» թեման, ընթացքում անդրադարձ անելու գործազրկության տեսակներին: Հիմնական հասկացությունները գրում է գրատախտակին: Դասը ներկայացնում է նաև տեսանյութի ձևով: Աշակերտները լրացնում են տետրում նոր հասկացությունները:

Անհրաժեշտ է՝ • *բացատրել դասի կարևոր դրույթներն ու սահմանումները* • *նոր նյութի միջոցով խթանել բարձր կարգի մտածողություն* • *ընկալման ստուգման հարցերն ուղղել գիտելիք հասկացման ստուգմանն ու վերլուծական մտածողությանը* • *աշակերտներին պատրաստել գործնական աշխատանքին*	Տեսանյութը ընթացքում կանգնեցնում է, ստուգում աշակերտների ընկալումը: Նոր նյութը ներկայացնելուց հետո կատարում է ընկալման ստուգում:
❖ **Ընկալման ստուգում** *Գրել ընկալման ստուգման հարցերը, որոնք պլանավորում եք ներկայացնել գործնական աշխատանքից առաջ, նոր նյութի ընկալումը ստուգելու և քննական մտածողությունը խթանելու համար:*	Հարցադրումները՝ • Նշեք **գործազրկության 3 տեսակ** և յուրաքանչյուրի կարճ բացատրություն: • Ինչպիսին կարող է լինել պետության դերը գործազրկության նվազեցման հարցում: • Ի՞նչ է աշխատաշուկան: • Ցիկլային և կառուցվածքային գործազրկության տարբերությունն ի՞նչն է:

Գործնական աշխատանք (15 րոպե)

Անհրաժեշտ է նոր գիտելիքն ու հմտությունը կիրառելու հնարավորություն ստեղծել՝ կապելով այն դասի վերջնադյունքների և նոր նյութի հետ: Գրել՝ ինչպես, ինչ մեթոդով/ եղանակով է իրականացվելու գործնական աշխատանքը, ինչ հրահանգ/հրահանգներ են տրվելու: Նշել ուսուցչի եւ աշակերտների գործողությունները, վարքային ակնկալիքները:

❖ **Պլանավորման ուղղորդումներ** **Անհրաժեշտ է՝** • *ապահովել համագործակցություն*	Ուսուցիչը դասարանը բաժանում է 3 խմբի՝ 1-ից 3 հաշվարկով: 🟦 **Խումբ 1. Արամուսի աշխատաշուկա** 1. Որո՞նք են համայնքում հիմնական զբաղվածության ոլորտները:

- *դիտարկել աշխատանքը*
- *տրամադրել անհրաժեշտ աջակցություն*
- *համոզվել, որ ներկայացված նոր նյութն օգնեց աշակերտներին առաջադրանքը կատարելիս*
- *համոզվել որ աշակերտները մասնակցում են, միմյանց լսում ու աջակցում են*
- *հավաստիանալ, որ կատարվող աշխատանքը կազմակերպված է*

2. Ինչպիսի՞ աշխատանքներ են առավել պահանջված:

3. Ինչո՞վ են զբաղվում երիտասարդները:

4. Արդյոք կան նորաստեղծ ձեռնարկություններ կամ ծառայություններ:
   Պատրաստեք կարճ ամփոփում (3-5 նախադասությամբ)

Խումբ 2. Գործազրկության պատճառները

1. Ինչո՞վ է պայմանավորված գործազրկությունը Արամուսում:

2. Արդյոք երիտասարդները մնում են համայնքում, թե մեկնում են:

3. Ինչ դժվարություններ են հանդիպում աշխատանքի որոնման ընթացքում:

4. Ինչ ազդեցություն ունի տեխնոլոգիան կամ կրթությունը:
   Գրել 3 հիմնական պատճառ

Խումբ 3. Լուծումներ և առաջարկներ

1. Ինչպե՞ս կարելի է ստեղծել նոր աշխատատեղեր Արամուսում:

2. Ինչ դեր կարող է ունենալ համայնքային ղեկավարությունը:

3. Ինչ նախաձեռնություններ կարող են իրականացնել աշակերտները կամ երիտասարդները:

Առաջարկեք առնվազն 2 իրագործելի գաղափար (օր.՝ երիտասարդական արհեստների կենտրոն, գյուղատնտեսական ակումբ, փոքր բիզնեսների աջակցություն)

Ընկալման ստուգում

- Ի՞նչ եք անելու:
- Ինչպե՞ս եք անելու:
- Ինչքա՞ն ժամանակ ունեք:
-

	• Ինչպե՞ս եք ներկայացնելու: • Ինչքա՞ն ներկայացման ժամանակ ունեք: **Աշխատանքի ամփոփում** Ժամանակի ավարտից հետո ուսուցիչը բանավոր հարցման միջոցով ստուգում է իրականացված աշխատանքը:

Ինքնուրույն աշխատանք (10 րոպե)

Գրել թե ինչ ինքնուրույն աշխատանք է պատրաստված աշակերտների համար: Ինքնուրույն աշխատանքը պետք է արտացոլի դասի վերջնարդյունքները և կապված լինի դասի նախորդ փուլերի հետ: Նշել առաջադրանքի հրահանգը, ուսուցչի և աշակերտների գործողությունները, աշակերտների վարքային ակնկալիքները:

❖ **Պլանավորման ուղղորդումներ** **Անհրաժեշտ է** • *ապահովել առաջադրանք, որը խթանում է աշակերտների քննական մտածողությունը* • *հնարավորություն տալ աշակերտներին ինքուրույն աշխատելու*	**Առաջադրանքը՝** Հանձնարարում է տետրում իրականացնել Ինչպիսի՞ գործազրկություն եք տեսնում մեր համայնքում: 📌 Ո՞րն է դրա ամենաուժեղ հետևանքը մարդկանց և տնտեսության վրա: 📝**Գրիր 2 նախադասությամբ** Տալիս 7 րոպե ժամանակ: Ժամանակի ավարտից հետո ամփոփում է առաջադրանքը, քննարկելով պատասխ

Դասի ավարտ (5 րոպե)

Ամփոփել դասի վերջնարդյունքները և կարևոր դրույթները: Աշակերտների հետ քննարկել սովորածի կարևորությունն ու հետագա կիրառությունը: Բացատրել տնային հանձնարարությունը և հաջորդիվ քայլերը:

	Ուսուցիչը այնուհետև կիրառում է բանալիների և կողպեքի մեթոդը: **Կողպեքի վրա գրվում է . " Աշխատանքը մարդու համար..." նախադասությունը :**

❖ **Պլանավորման ուղղորդումներ** **Անհրաժեշտ է՝** • *անդրադարձ կատարել աշակերտներիի վարքին եւ կատարողականին (գնահատում/խրախուսանք)* • *հետադարձ կապ տրամադրել դասին*	Աշակերտները բանալիների վրա գրում են մտքի շարունակությունը ըստ իրենց և փակցնում կողպեքի շուրջը: Այդ ընթացքում Մոցարտից հնչում է մի հատված, որի ներքո աշակերտները տալիս են բազմապիսի և հետաքրքիր պատասխաններ աշխատանքի մասին և դրանք կապում առօրյա կյանքի հետ: Ուսուցիչը ևս մեկ անգամ անդրադառնում է դասի վերջնարդյունքներին: